ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2024թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-մարտ)





2024թ. հունվար-մարտին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 489.7 մլրդ դրամ, ինչը 131.3 մլրդ դրամով կամ 21.1 %-ով պակաս է 2023թ. և 216.1 մլրդ դրամով կամ 79 %-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվար-մարտին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 377.4 մլրդ դրամ, ինչը 26.4 մլրդ դրամով կամ 6.5 %-ով պակաս է 2023թ. և 196.8 մլրդ դրամով կամ 109 %-ով ավել է 2022 թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվար-մարտին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 112.3 մլրդ դրամ, ինչը 104.9 մլրդ դրամով կամ 48.3%-ով պակաս է 2023թ. և 19.3 մլրդ դրամով կամ 20.8 %-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

2024թ. հունվար-մարտին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 1214.8 մլն դոլար, ինչը 367.7 մլն դոլարով կամ 23.3%-ով պակաս է 2023 թ. և 654.2 մլն դոլարով կամ 116.7%-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվար-մարտին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 936.2 մլն դոլար, ինչը 93.1 մլն դոլարով կամ 9 %-ով ավել է 2023թ. և 565.8 մլն դոլարով կամ 152.8%-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024 թ. հունվար-մարտին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 278.6 մլն դոլար, ինչը 274.6 մլն դոլարով կամ 49.6%-ով պակաս է 2023թ. և 88.4 մլն դոլարով կամ 46.5 %-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**